

ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ՍԱՐԳԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՆ ԺԱՄԱՆԵԼ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ։

ԱՅՍ ԱՌԹԻՎ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՋԵՐՄ ՈՂՋՈՒՅՆՆ ԵՆ ՀՂՈՒՄ ՋԵՋ, ԻԲՐԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, և ՀԱՆՁԻՆ ՋԵՋ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ԱՅՆ ԴՅՈՒՐՈՒԹՅԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՐ ԸՆՁԵՌՎՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՈՒՆ և ՆՐԱ ՇՈՒՐՋԸ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ՍՊԱՍԱՎՈՐՆԵՐԻՆ ՈՒ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ՝ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՐՑԵՐԸ։

ՄԵՆՔ ՎՍՏԱՀԵՑՆՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԲԱՐԵԽՆԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՉՊԵՍ ՄԻՇՏ, ԱՅՍՈՒՀԵՏ և ԱՍ ՀԱՎԱՏԱՐՈՒՄ ԿՄՆԱ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ և ՀԱՅՐԵՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՇԱՀԵՐԻՆ, ԱՄԵՆ ՋԱՆՔ ՈՒ ԵՌԱՆԴ Ի ԳՈՐԾ ԴՆԵԼՈՎ ՄԵՐ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԾԱՂԿՄԱՆ ՈՒ ՎԵՐԵԼՔԻ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋև ՍԻՐՈ և ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ և ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՆՎԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ։

ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶԱԿԱՆ
ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

13 ապրիլի 1959 թ.
ԷՋՄԻԱԾԻՆ